ՌԴ գիտությունների ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Ալեքսանդր Սերգեևն ընտրվել է ՀՀ ԳԱԱ պատվավոր անդամ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ընդհանուր ժողովը Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Ալեքսանդր Սերգեևին ընտրել է ՀՀ ԳԱԱ պատվավոր անդամ ՀՀ ԳԱԱ նախագահության որոշման հիման վրա:

Ալեքսանդր Սերգեևը ՌԳԱ-ի նախագահ է 2017 թ.-ից: Նրա գիտական հետազոտություններն ընդգրկում են լազերային ֆիզիկայի, ֆեմտովայրկյան օպտիկայի, ոչ գծային ալիքային երևույթների տեսության, պլազմայի ֆիզիկայի և բիոֆոտոնիկայի բնագավառները:

Ակադեմիկոս Սերգեևի ղեկավարած գիտական խմբի մշակած պատկերապատման մեթոդները հնարավորություն են ընձեռում ախտորոշելու ուռուցքաբանական հիվանդությունները: Խմբի աշխատանքներն ուղղված են կենսաբանական հյուսվածքների օպտիկական տոմոգրաֆիայի գործիքների ստեղծմանն ու օգտագործմանը և ներառում են այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են օպտիկական համահունչ տոմոգրաֆիան, օպտիկական դիֆուզիոն տոմոգրաֆիան, դիֆուզիոն լյումինեսցենտային տոմոգրաֆիան, ուլտրամիկրոսկոպիան:

Ալեքսանդր Սերգեևի բեղմնավոր գիտական գործունեության մասին են վկայում նրա 350 գիտական հոդվածներն ու աշխատությունները՝ զուգակցված մանկավարժական արգասաբեր աշխատանքի հետ:

Գիտության մեջ ծանրակշիռ ներդրումների համար վաստակաշատ գիտնականն արժանացել է Ռուսաստանի Դաշնության պետական մրցանակի (1999 թ.), կառավարության մրցանակի (2012 թ.), պարգևատրվել է Պատվո շքանշանով (2006 թ.):

Ալեքսանդր Սերգեևը ՀՀ և ՌԴ գիտությունների ակադեմիաների համատեղ գիտահետազոտական գործունեության ջատագովներից է: Համաձայն գիտատեխնիկական համագործակցության ճանապարհային քարտեզի նախագծի՝ երկու երկրների ակադեմիաների կողմից իրականացվելու են լայնամասշտաբ ծրագրեր՝ լեռնային լճերի էկոլոգիական վիճակի գնահատման հեռահար մեթոդի մշակում, երկրաֆիզիկական և սեյսմագեոդինամիկ գործընթացների ուսումնասիրություն, սինթեզված նոր նյութերի վրա հիմնված ակուստաէլեկտրոնային սարքերի մշակում և ստեղծում, COVID-19 ախտորոշիչ փաթեթների մշակում, երիտասարդ գիտնականների առաջխաղացման հարցերի քննարկում և այլն:

Հիշեցնենք, որ սեպտեմբերի 30-ին ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Աշոտ Սաղյանը Մոսկվայում հանդիպել էր ՌԳԱ-ի նախագահ Ալեքսանդր Սերգեևի հետ, քննարկվել էին երկու պետությունների ակադեմիաների համագործակցության գերակա ուղղությունները:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն